

Ապահով Համացանց 2015

Բաց դաս

Մեսրոպյան Աշխեն

ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Խ. Սողոմոնյանի անվան հ. 2 հիմնական դպրոց

8-րդ դասարան

Նպատակները, ակնկալվող արդյունքները.

ա) ակադեմիական

Դասի արդյունքում սովորողները

- կստանան գիտելիքներ համացանցի ապահովության մասին, նրա արդյունավետ օգտագործման մասին
- կզարգացնեն համացանցում աշխատելիս անվտանգության կանոնների կիրառման և պաշտպանության հմտությունները
- կիմանան, որ անհրաժեշտ է վստահել ծնողներին

բ) սոցիալական

- կզարգացնեն ողջամտությամբ և խոհեմությամբ վերլուծելու և եզրահանգելու գաղափարը
- ձեռք կբերեն համացանցում որոշակի ռիսկերից պաշտպանվելու և գործիքների ու ծրագրերի ճիշտ կիրառման կարողություններ
- կզարգացնեն համացանցում շփվելիս էթիկայի նորմերը
- կդիմեն մասնագետին կամ ծնողներին, եթե համացանցում իրենց հանդեպ կան հետապնդումներ և ոտնձգություններ, եթե համակարգիչն իրեն տարօրինակ է պահում

Անհրաժեշտ նյութեր և սարքեր՝ համացանցին միացված համակարգիչ, պրոեկտոր, էկրան, շարժական գրատախտակներ, պաստառներ, մարկերներ, կպչուն ժապավեն, թեստեր, դասասենյակի ձևավորում համապատասխան դիդակտիկ նյութերով:

Դասի ընթացքը.

1. Դասարանը բաժանվում է հինգհոգանոց խմբերի ըստ հետևյալ անվանումների՝
 - հակավիրուսային ծրագիր
 - հակալրտեսային ծրագիր
 - փոստաղբային գտիչ (գտիչ)
 - հրապատ
2. Ուսուցչի մեկնաբանությունն դասղեկի ժամի թեմայի վերաբերյալ և հանձնարարությունն սովորողներին 3 րոպեի ընթացքում վերլուծելու <<Անվտանգությունը ապահովության գրավականն է >> ասույթը

(քննարկում, եզրահանգումներ՝ ամենուր կարևոր են անվտանգության կանոնները. թե՛ խաղահրապարակում, թե՛ փողոցում, թե՛ քիմիայի կաբինետում աշխատելիս և այլն)

3. Խմբերին բաժանվում են հանելուկներ, որոնց միջոցով պետք է կռահեն, թե ինչի մասին է ծավալվելու զրույցը (համակարգիչ, համացանց, բջջային հեռախոս, պլանշետ)
4. Ուսուցչի մեկնաբանությունն այն մասին, որ համացանցը և բջջային տեխնոլոգիաները որքան կարող են լինել լավը, այնքան էլ՝ վատը:
5. Էկրանին ներկայացվում է փոքրիկ ակնարկ <<Համացանցի ստեղծման պատմության>> մասին: (ներկայացվում են կապի անվտանգությունը ապահովող կայքերը, թե՛ զժի հեռախոսահամարը և եվրոպական ցանցի կայքը՝ <http://www.safe.am> , <http://www.saferinternet.org>)
6. Խմբերը վերլուծում և մեկնաբանում են <<Ի՞նչ է ըստ ձեզ համացանցը>> հարցը (կարծիքներ լսելուց հետո Էկրանին տրվում է փոքրիկ տեղեկություն համաշխարհային սարդոստայնի մասին)
7. Սովորողները T – աձև աղյուսակի միջոցով մեկնաբանում են համացանցի դրական և բացասական կողմերի մասին
8. Էկրանին ցուցադրվում են համացանցի անվտանգության վերաբերյալ օգտակար խորհուրդների մասին կայքերը՝ <http://www.webwise.ie/index.aspx> կամ www.makeitsecure.ie և www.sate.am (նշվում է KASPERSKY աշխարհում ամենահայտնի հակավիրուսային ծրագրի մասին)
9. Մասնակիցներին բաժանվում են թեստեր ստուգելու համար՝ արդյոք անվտանգ է իրենց ընտանեկան համացանցը

10. Էկրանին ցուցադրվում են համացանցից օգտվելու ոսկե կանոնները

11. Սովորողների մասնակցությամբ ներկայացվում է բեմականացում- իրավիճակ, երբ դեռահասը համակարգչից օգտվելիս նկատում է, որ այն իրեն տարօրինակ է պահում և կանչում է ծնողներին (դերերում՝ տրոյական ձի, վիրուս, որդ, լրտեսածրագիր, փոստադրժային գտիչ, գտիչ, հակավիրուսային ծրագիր, հակալրտեսային ծրագիր, հրապատ)

12. Երևույթի համեմատում ֆագոցիտոզի հետ, ապա ուսուսիցը թեման ամբողջացնում է երկու Ապագայի անիվների միջոցով՝

- Վտանգավոր համացանց (պատճառ, հետևանք)
- Անվտանգ համացանց (պատճառ, հետևանք)

13. Գնահատումը տեղի է ունենում թեստերի միջոցով <<Արդյոք ճիշտ եք հասկացել>>, որտեղ պետք է լրացվեին ստացված և սովորած տեղեկությունները

14. Մասնակիցներին բաժանվում են բուկլետներ, որտեղ զետեղված են խորհուրդներ պատանիներին սոցիալական ցանցում:

15. Տեղեկություն Ընտանեկան ուրախ ձեռնարկի և Ծնողական ուղեցույցի մասին, նրանց կայքերի մասին:

16. Շնորհակալական խոսքեր ծրագրի կազմակերպիչ Օրանժ – Արմենիա ցանցին հիանալի լուսաբանող առաջարկի մասին:

17. Մաղթանք Անվտանգ ճանապարհորդություն համացանցի լաբիրինթոսներում: